ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/21/9292-2022

02 11
«.....».....2022 թ.

«ՊՐՈՄԱՔ» ՍՊԸ-Ի
ՏՆՕՐԵՆ Դ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Գրիգորյան,

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «ՊրոՄաք» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 01248819) միջև 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/06» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) համաձայն, Ձեր ընկերությունը պարտավոր էր սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել «**Գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական**» աշխատանքներ»՝ (այսուհետ՝ Աշխատանք) համաձայն Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող N 1 Հավելվածով ներկայացված գնման ժամանակացույցի և N 2 հավելվածով ներկայացված տեխնիկական բնութագրի:

Համաձայն Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի՝ (Համաձայնագիր թիվ 2՝ առ 07.05.2021թ.) պետք է մինչև 01.11.2021 թվականը Կատարողի կողմից հանձնվեր առաջին փուլի, մինչև 15.02.2022թ. երկրորդ փուլի, իսկ մինչև 20.04.2022 թվականը՝ երրորդ փուլի արդյունքները, որոնք մինչ օրս կատարված չեն (աշխատանքները՝ այդ թվում փուլային, պատվիրատուին չեն հանձնվել):

Համաձայն Պայմանագրի 6.2 կետի՝ Կողմերից որևէ մեկի միակողմանի հրաժարման դեպքում մեղավոր կողմը փոխհատուցում է մյուս կողմի բոլոր վնասները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Նույն Պայմանագրի 6.5 կետի համաձայն՝ կատարողը պատվիրատուի առջև պատասխանատվություն է կրում գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ. (37410) 590009, էլ. հասցե՝ narek.melkumyan@hti.am

աշխատանքների կատարման պայմանագրի խախտման համար, եթե չի ապացուցում, որ նման խախտումն առաջացել է իր մեղքից անկախ հանգամանքների հետևանքով և սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը չկատարելու դեպքում վերադարձնում է պատվիրատուի կողմից տրված կանխավճարը և առանձին փուլերով կատարված աշխատանքների դիմաց վճարված գումարը, ինչպես նաև վճարում է տուգանք պայմանագրի գնի 0,5 %-ի չափով:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2020 թվականի դեկտեմբերի 20-ին կնքված N «ԲՏԱՆ-ՄԱԱՇՁԲ-20/06» գնման պայմանագրի 2.1.5 կետի բ) ենթակետը, 2022 թվականի նոյեմբերի 02-ից միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում ենք, որ «ՊրոՄաք» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 10 (տաս) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական «900005570115» հաշվեհամարին վերադարձնել (վճարել) տրամադրված կանխավճարը՝ 400,000,000 (չորս հարյուր միլիոն) ՀՀ դրամ գումարը, տուգանքը՝ պայմանագրի գնի 0,5 %-ի չափով՝ 3,273,565 (երեք միլիոն երկու հարյուր յոթանասուներեք հազար հինգ հարյուր վաթսունհինգ) ՀՀ դրամ գումարը, նույն ժամկետներում վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին, իսկ Պայմանագրով նախատեսված տույժերը՝ 73,332,553 (յոթանասուներեք միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ գումարը վճարել գանձապետական «900005028106» հաշվեհամարին:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ հատկացված կանխավճարի մնացած՝ 200.000.000 (երկու հարյուր միլիոն) ՀՀ դրամին համարժեք դոլարի չափով գումարը, տեղափոխվել է «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի «2050622015661021» ԱՄՆ դոլարային հաշվեհամարին և սառեցվել՝ նշված գումարի, այդ թվում դոլարից դրամ փոխակերպելու արդյունքում առաջացած տարբերության հետվերադարձի մասով լրացուցիչ կտեղեկացվի:

Պայմանագրով նախատեսված տույժերի չափերն են.

1-ին փուլ՝ 01.11.2021թ.-01.11.2022թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 254 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 50,800,000 (հիսուն միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ (400 000 000 x 0.05% x 254),

2-րդ փուլ՝ 15.02.2022թ.-01.11.2022թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 181 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 20,815,000 (քսան միլիոն ութ հարյուր տասնհինգ հազար) ՀՀ դրամ (230 000 000 x 0.05% x 181),

3-րդ փուլ՝ 15.04.2022թ.-01.11.2022թ. ընկած ժամանակահատվածի համար, որը կազմում է 139 աշխատանքային օր: Տույժի հաշվարկը կազմել է 1,717,553 (մեկ միլիոն յոթ հարյուր տասնյոթ հազար հինգ հարյուր հիսուներեք) ՀՀ դրամ (24 713 000 x 0.05% x 139):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա, լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարկ ենք համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝
ՓՈԽԱՐԻՆՈՂ

11/2/2022

X

ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Signed by: ALEKSANYAN GEVORG 2604770393

ԳԵՎՈՐԳ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾԵՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ • ԵՐԵՎԱՆ

Գնումների բաժին
010 59 00 47